ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պառոշյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցած ՀՀ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գյուղ Պառոշյան, Գ. Չաուշի խճուղի 95 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան շենքի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2024թ-ի դեկտեմբերի 9-ին ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պառոշյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գյուղ Պառոշյան, Գ. Չաուշի խճուղի 95 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան շենքի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Առավոտ» օրաթերթի 2024 թ-ի նոյեմբորի 8-ի համարում:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի բնակիչները, նախագծող կազմակերպության, նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Էկոնոմ Էկո» ՍՊԸ) ներկայացուցիչները:

Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ **Յ. Ռզգոյանը** ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց ՇՄԱԳ թիմի ներկայացուցիչ Մերի Վարդանյանին:

Մ. Վարդանյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց ներկաներին, որ քննարկվող նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է 2 հանրային քննարկում: Քննարկումների արդյունքում արված առաջարկությունները հաշվի կառնվեն հետագա գործողությունների համար: Այնուհետև Մ. Վարդանյանը ներկայացրեց ծրագրին և նախագծին վերաբերող որոշ մանրամասներ, հնարավոր բնապահպանական միջոցառումները, այնուհետև խոսքը փոխանցեց նախագծող կազմակերպության ներկայացուցիչ Լ. Մխոյանին:

Լ. Մխոյանը ներկայացրեց նախագծի մանրամասները և քանակական տվյալները:

Բնակավայրի բնակիչ **Ս. Գաբրիելյանը** հարցրեց, թե ե՞րբ է շենքը շահագործման հանձնվելու և արդյոք բնակարանների չափերը տարբե՞ր են:

Լ. Մխոյանը պատասխանեց, որ շենքը շահագործման է հանձնվելու 2 տարուց, իսկ բնակարանները 1-5 սենյականոց են:

Բնակիչ **Ս. Ադամյանը** հարց ուղղեց, թե արդյո՞ք շենքը հարմարացված է լինելու սակավաշարժ խմբերի համար:

Լ. Մխոյանը նշեց, որ շենքը հարմարեցված է սակավաշարժ խնդիրներ ունեցող մարդկանց համար:

Բնակիչներից մեկը հարց բարձրացրեց շենքի սեյսմոկայունության վերաբերյալ:

Լ. Մխոսյանը պատասխանեց, որ շենքը նախատեսված է 9-10 բալ սեյսմոկայունության համար:

Նաիրի համայնքի համայնքապետարանի անձնակազմի գլխավոր մասնագետ **Յ.Ռզգոյանը** հարց ուղղեց, թե արդյո՞ք բնակարանները վերանորոգված են հանձնվելու գնորդներին:

Լ. Մխոյանը նշեց, որ բնակարանները վերանորոգված չեն հանձնվելու գնորդներին:

Նախագիծն արժանացավ դրական գնահատականի Պռոշյան բնակավայրի բնակիչների կողմից:

Այլ հարցեր չհնչեցին և քննարկումն ավարտեց:

Քննարկումների վարող և պատասխանատու՝
Նաիրի համայնքի համայնքապետարանի
անձնակազմի գլխավոր մասնագետ՝ Յ.Ռզգոյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Լ. Մխոյան